ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թ Ի Վ 7

«23» հունվարի 2020 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ՄԱՅԻՍՅԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-077-0017-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.676571 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ՝ ԱՐԱՄ ՍՈՒՐԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ԵԼԵՆԱ ԱՂԱՍՈՒ ԶԱՎԱՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10102019-08-0030 վկայականով Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մայիսյան գյուղի 7-րդ փողոցի, թիվ 8 անասնաշենք հասցեում գտնվող 871.61 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը, 128.33 քառակուսի մետր օժանդակ շինությունը, 73 քառակուսի մետր մակերեսով պարիսպները ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում են Արամ Սուրենի Խաչատրյանին և Ելենա Աղասու Զավարյանին և հաշվի առնելով վերջիններիս համատեղ դիմումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը համարվող 08-077-0017-0005

կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.676571 հեկտար հողամասը, որի վրա առկա է քաղաքացիներ՝ Արամ Սուրենի Խաչատրյանի և Ելենա Աղասու Զավարյանի սեփականության իրավունքով պատկանող 871 . 61 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը, 128 . 33 քառակուսի մետր օժանդակ շինությունը, 73 քառակուսի մետր մակերեսով պարիսպները / հասցե՝ Մարմաշեն համայնքի, Մայիսյան գյուղի 7-րդ փողոց, թիվ 8 անասնաշենք/ ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման /գտնվելու վայրի/, գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» թիվ 1746-Ն որոշման 2-րդ կետի «դ» ենթակետով սահմանված լրացուցիչ նվազեցնող 0,6 գործակցի կիրառմամբ, մեկ քառակուսի մետրը՝ 205.2 ՀՀ դրամ, 0 . 676571 հեկտար հողամասի համար՝ 1388324 /մեկ միլիոն երեք հարյուր ութսունութ հազար երեք հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ արժեքով վաճառել քաղաքացիներ՝ Արամ Սուրենի Խաչատրյանին /անձնագիր AR 0358382, տրված՝ 04 . 07 . 2017 թվական, 064-ի կողմից/ և Ելենա Աղասու Զավարյանին/ անձնագիր AM 0792861, տրված՝ 05.07.2012 թվական, 016-ի կողմից/:

2. Նշել, որ սույն որոշման առաջին կետում նշված հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանին.

ա/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացիներ՝ Արամ Սուրենի Խաչատրյանի և Ելենա Աղասու Զավարյանի հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

բ/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը:

4. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	Դեմ՝	Չեռնպահ՝
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝			
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝			
ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝			
ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝			
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝			
ԶԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝			
ՊԵՏՐՈՍ ՍԱՀԱԿՅԱՆ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«23» հունվարի 2020 թվական
գյուղ Մայիսյան